«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ»

2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողով
14-17 սեպտեմբերի 2017թ.
Արցախ (ԼՂՀ), ք.Ստեփանակերտ

ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

СБОРНИК МАТЕРИАЛОВ

2-ая международная молодёжная конференция

«ПРОБЛЕМЫ И ПЕРСПЕКТИВЫ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ»

14-17 сентября 2017г.
Арцах (НКР), г.Степанакерт

‘‘ISSUES AND PROSPECTS OF THE ARTSAKH REPUBLIC’S INTERNATIONAL RECOGNITION’’

2nd international youth conference
September 14-17, 2017
Stepanakert, Artsakh (NKR)

SOURCEBOOK

ԱԵԳՄՄ-ОМУСА-UYSSA
ԵՐԵՎԱՆ-ЕРЕВАН-YEREVAN
2017

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0
Ա 948

Հրատարակության է երաշխավորվել Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարանի Գիտական խորհրդի որոշմամբ
Рекомендовано к публикации решением Ученого совета Университета Месроп Маштоц г.Степанакерта
Recommended for publication by the decision of the Academic Council of the Mesrop Mashtots University in Stepanakert

Խմբագրական խորհուրդ
Նախագահ՝ ի.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Գագիկ Ղազինյան**
Անդամներ՝ հ.գ.դ., պրոֆ. **Հրանտ Ավանեսյան**, պ.գ.դ., պրոֆ. **Վալերի Ավանեսյան**, ք.գ.դ., դոց. **Խաչիկ Գալստյան**, ի.գ.դ., պրոֆ. **Վլադիսլավ Գրուզդև**, ք.գ.դ., պրոֆ. **Սոկրատ Խանյան**, ի.գ.դ., պրոֆ. **Աշոտ Խաչատրյան**, ք.գ.դ., պրոֆ. **Մարիամ Մարգարյան**, տ.գ.դ., պրոֆ. **Հայկ Սարգսյան**, ք.գ.դ., պրոֆ. **Գարիկ Քեռյան**, պ.գ.թ., դոց. **Գրիգոր Բալասանյան,** պ.գ.թ., դոց. **Նելլի Բաղդասարյան**, տ.գ.թ., դոց. **Եվգենյա Հայրիյան**, ի.գ.թ., դոց. **Անահիտ Մանասյան**, հ.գ.թ., դոց. **Վիտյա Յարամիշյան**, տ.գ.թ., դոց. **Կարեն Ներսիսյան**, ի.գ.թ. **Սիրանուշ Պետիկյան**
Քարտուղար՝ ի.գ.թ. **Ավետիք Հարությունյան**

Редакционный совет
Председатель: д.ю.н., проф., академик НАН РА **Гагик Казинян**
Члены: д.п.н., проф. **Грант Аванесян**, д.и.н., проф. **Валерий Аванесян**, д.п.н., доцент **Хачик Галстян**, д.ю.н., проф. **Владислав Груздев**, д.ф.н., проф. **Сократ Ханян**, д.ю.н., проф. **Ашот Хачатрян**, д.п.н., проф. **Мариам Маргарян**, д.э.н., проф. **Айк Саргсян**, д.п.н., проф. **Гарик Керян**, к.и.н., доц. **Григор Баласанян**, к.и.н., доц. **Нелли Багдасарян**, к.э.н., доц. **Евгения Айриян**, к.ю.н., доц. **Анаит Манасян**, к.п.н., доц. **Витя Ярамишян**, к.э.н., доц. **Карен Нерсисян**, к.ю.н. **Сирануш Петикян**
Секретарь: к.ю.н. **Аветик Арутюнян**

Editorial board
Editor-in-Chief: Gagik Ghazinyan, LL.D., Prof., NAS RA Academician
Editors: **Hrant Avanesyan**, Psy.D., Prof., **Valeri Avanesyan**, Doctor of History, Prof., **Khachik Galstyan**, Dr sc. pol., Assoc. Prof., **Vladislav Gruzdev**, LL.D., Prof., **Sokrat Khanyan**, Doctor of Philology, Prof., **Ashot Khachatryan**, LL.D., Prof., **Mariam Margaryan**, Dr sc. pol., Prof., **Hayk Sargsyan**, Dr sc. ec., Prof., **Garik Keryan**, Dr sc. pol., Prof., **Grigor Balasanyan**, Candidate of History, Assoc. Prof., **Nelly Baghdasaryan**, Candidate of History, Assoc. Prof., **Yevgenya Hayriyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Anahit Manasyan** Candidate of Law, Assoc. Prof., **Vitya Yaramishyan,** Candidate of Psy. sc., Assoc. Prof., **Karen Nersisyan**, Candidate sc. ec., Assoc. Prof., **Siranush Petkiyan**, Candidate of Law
Secretary: **Avetik Harutyunyan**, Candidate of Law

Ա 948 «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերի ժողովածու. – Եր.: ԱԵԳՄՄ, 2017, 284 էջ:

Ժողովածուում ներառված են «Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման հիմնախնդիրներն ու հեռանկարները» 2-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի նյութերը:

В сборник включены материалы 2-ой международной молодёжной конференции «Проблемы и перспективы международного признания Республики Арцах».

The material covered by the 2nd international youth conference “Issues and prospects of the Artsakh Republic’s international recognition” are included into the sourcebook.

ՀՏԴ 32.001:06
ԳՄԴ 66.0

ISBN 978-9939-1-0643-4

© Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորում (ԱԵԳՄՄ), 2017

www.aegmm.org

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Սուրեն Պետրոսյան
ՀՀ ՊԿԱ քաղաքական կառավարման և
հանրային քաղաքականության
ամբիոնի ասպիրանտ
surenpetrosyan10@gmail.com
Գիտ. ղեկ.՝ բ.գ.դ., պրոֆեսոր Մ.Մարգարյան

20-րդ դարի երկրորդ կեսից սկսած գործընթացները պայմանավորված 2-րդ համաշխարհային պատերազմի ավարտով, ազգերի սեփական ինքնության, տեղի ու դերի վերաիմաստավորումով և Միավորված ազգերի կազմակերպության ստեղծումով[1] նոր հարթություն տեղափոխվեց ազգերի ինքնորոշման իրավունքի գաղափարը: Որոշ ժամանակ անց ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված 1514(XV) բանաձևով «Ազգերի ինքնորոշման իրավունքը» ինստիտուցիոնալացվելուց հետո[2] հետագայում արդեն ամրապնդվեց, որպես ժամանակակից միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք: Այսպիսով, եթե 1945թ աշխարհում հաշվառվում էր 68 պետություն, որից ՄԱԿ-ի անդամ էին 51-ը ապա ներկայումս հաշվառվում է 195 պետություն, որից ՄԱԿ-ի անդամ են 193-ը[3]:

Ելակետ ընդունելով վերոնշյալը, որպես հարահոս փոփոխվող, գլոբալիզացվող, ազգերի ինքնորոշման և ցանցային հարաբերությունների տրամաբանության շրջանակներում զարգացող աշխարհաքաղաքական գործընթացները փաստող իրողություն հարկ է փաստել, որ ինչպես տարածաշրջանը այնպես էլ ողջ աշխարհի քաղաքական քարտեզը մշտապես ենթարկվում են փոփոխությունների: Արդյունքում ձևավորվում և վերակազմավորվորվում են նոր աշխարհաքաղաքական բևեռներ, ուժային կենտրոններ՝ տարրաբնույթ և բազմաշերտ ազդեցությունների շրջանակներով, որոնց քաղաքականության իրականացման արժեքաբանությունը ոչ միարժեք են և ոչ սահմանակարգված, իսկ միջազգային իրավունքի տեսանկյունից՝ շատ հաճախ վերջինիս հակասող:

Ցանցային հարաբերությունները, ոչ սահմանակարգված խաղի կանոնների իրողությունը և տեղեկատվահաղորդակցական տեխնոլոգիաների աննախադեպ զարգացումը սեղմելով ժամանակը, կերպափոխելով ժամանակի և տարածության վերաբերյալ ունեցած պատկերացումները նվազագույնի են հասցնում կանխատեսելի ելքով խաղի հնարավորությունը: Երևույթների կանխատեսելի և անկանխատեսելի կերպափոխումների արդյունքում ստեղծված տարածությունը ինչպես ընձեռում է բազմաշերտ հնարավորություններ այնպես էլ նետում է տարրաբնույթ մարտահրավերներ, որոնց շրջանակներում համարժեք արդիականացումը հնարավորություն կտա ձևավորել թե՛ կենսական տարածություն, և թե՛ ապահովել տեսակի կենսունակությունը:

---

[1] http://www.un.org/en/sections/history/history-united-nations/
[2] http://www.un.org/en/ga/search/view_doc.asp?symbol=A/RES/1514(XV)
[3] http://www.un.org/en/sections/member-states/growth-united-nations-membership-1945-present/index.html

Այս համատեքստում հարկ ենք համարում առանձնակի կարևորել քաղաքական ընտրանու, որպես քաղաքական գործընթացները կրողի, ձևավորողի, արժեշահային կողմնորոշումներ գեներացնողի, ապագայի ռազմավարական մոդելավորողի և գլխավոր պատասխանատուի կարևորագույն դերը: Փորձելով որորշակիորեն եզրագծել քաղաքական ընտրանու գործունեության և պատասխանատվության շրջանակը, կարևորում ենք նաև վերջինիս համակողմանի ուսումնասիրման հիմնախնդիրը:

Այս նկատառումներով նպատակահարմար ենք համարում դիտարկել քաղաքական ընրանուն և նրա հրամայականները Արցախյան հակամարտության բանակցային գործընթացում՝ փաստելով, որ անկախ մեկամյա վաղեմություն ունեցող «քառօրյա պատերազմի» իրողությունից, բանակցային գործընթացը մնում է առաջնային ու միակ ընդունելի տարբերակը հակամարտության կարգավորման տեսլականում:

Արցախի քաղաքական ընտրանու, համախմբումը գործունեությունը և հավաքագրումը առավել ընդունելի ենք համարում վերոնշյալ արժեքավարքաբանական կողմնորոշիչների շրջանակներում, որտեղ կառավարումը պետք է իրականացվի բազմամակարդակ համագործակցային (ռազմական, տնտեսական, ՁԼՄ, մշակութային և այլ ընտրանիներ) տրամաբանությամբ՝ հստակ ռազմավարության մշակմամբ: Այս մոտեցումը առավել կենսական է արցախյան հակամարտության սրման և սույն թվականի փետրվարի 20-ին Արցախում իրականացված սահմանադրական բարեփոխումների ֆոնին, որի արդյունքում տեղի ունեցավ քաղաքական իշխանության գերկենտրոնացում՝ կիսանախագահականից նախագահական կառավարման ձևին անցումով պայմանավորված[1]:

Փաստելով Արցախյան հակամարտության տիրույթում նետված բազմամակարդակ լրջագույն մարտահրավերները, դրանց բանակցային գործընթացի միջոցով կարգավորման ակնկալիքները՝ դիտարկենք Արցախի քաղաքական ընտրանու հրամայականները բանակցային գործընթացում:

Գործնականում կիրառելի համարելով Ռ. Ֆիշերի այն մոտեցումը, որ «Անկախ այն բանից՝ բանակցությունները վարվում են ազգերի միջև խաղաղության հաստատման հարցերի, թե պայմանագրերի շուրջ, մարդիկ, որպես կանոն, դրանց ընթացքում ներքաշվում են դիրքային սակարկությունների մեջ: Յուրաքանչյուր կողմ գրավում է ինչ-որ դիրք, պնդում այն և համաձայնության հասնելու նպատակով զիջումների գնում»[2] հարկ ենք համարում վերաձևավորել և հստակեցնել բանակցային դիրքերը հաշվի առնելով քառօրյա պատերազմով խաղտված խաղաղության հարացույցը:

Հարկ է փաստել, որ բարիդրացիականորեն և արդյունավետորեն խոհեմ համաձայնություններ ձեռք բերելու ուղին սկզբունքային բանակցությունն է: Որքան ավելի հետևողականորեն է առաջ քաշվում արդարության, արդյունավետության չափորոշիչներ կամ գիտական հիմնավորումներ որև առանձին վերցված խնդիրը կարգավորելիս, այնքան ավելի է մեծանում հավանականությունը, որ վերջնական համաձայնությունները կլինեն անաչառ և խոհեմ[3]:

---

[1] Արցախ Հանրապետության Սահմանադրություն, Ստեփանակերտ 2017թ. , գլուխ 4

[2] Ռոջեր Ֆիշեր, Ուիլյամ Ուրի, Համաձայնության հասնելու ուղին, բանակցություններ առանց պարտվողների, Երևան 2005թ. էջ 16

[3] Ռոջեր Ֆիշեր, Ուիլյամ Ուրի, Համաձայնության հասնելու ուղին, բանակցություններ առանց պարտվողների, Երևան 2005թ. էջ 127

Հաշվի առնելով վերոնշյալը և արցախյան հակամարտության կարգավորումը իրականացնելով միջազգային իրավունքի երեք հիմնարար սկզբունքների (ազգերի ինքնորոշում, տարածքային ամբողջականություն, ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառում) հիման վրա, առաջնային ենք համարում Արցախի Հանրապետության վերադարձը բանակցային սեղան, որպես լիիրավ 3-րդ կողմ: Քանի որ միայն վերջինս՝ թեպետ լինելով չճանաչված սակայն ունենալով կայացած պետության բոլոր լիարժեք ատրիբուտները կարող է համակողմանի և լիարժեք ներկայացնել իր բնակչության շահերը մոդելավորելով ռազմավարական ապագան:

Այս նկատառումներով բացարձակ կիրառելի ենք համարում 2008թ-ին ԼՂՀ նախագահի և Ազգային ժողովի տարեվերջյան արձագանքները այն մասին, որ ԼՂՀ խնդրի կարգավորման վերաբերյալ որևէ որոշում, որն ընդունված կլինի առանց ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցության, չի կարող պարտադրվել Լեռնային Ղարաբաղին, և լուծումը հնարավոր է միայն ԼՂՀ ներկայացուցիչների մասնակցության պարագայում:[1] Հատկանշական է նաև վերոնշյալ դիրքորոշման կիրառելիությունը փաստող ամերիկացի քաղաքագետ և սոցիոլոգ Ս. Հանթինգտոնի մոտեցումը, որտեղ նա Արցախը դիտարկում է, որպես կարևորագույն և առաջնային դերակատար իսկ Հայաստանին և անգամ Ադրբեջանին արցախյան հակամարտության կարգավորման շրջանակներում, երկրորդային մակարդակի դերակատարներ[2]:

Նպատակահարմար ենք համարում բանակցային գործընթացի շրջանակներում Արցախի քաղաքական ընտրանու կողմից հստակ ռազմավարության մշակումը, որի տրամաբանության հիմքում ընկած կլինի ոչ թե կողմնորոշումը դեպի «ուժային կենտրոններ», այլ ինքնորոշումը պայմանավորված ազգային բացարձակ շահով: Իսկ բանակցային մակարդակում կկիրառվեն հակամարտության կարգավորման ՀՀ-ի կողմից սահմանված սկզբունքները՝ բացառությամբ 2-րդի, որի տրամաբանության հիմքում, որպես նվազագույն արդյունք պետք է ընկած լինի ոչ թե հայկական կողմի իրավազորության տակ գտվող անխափան ցամաքային կապը ՀՀ և Արցախի միջև[3], այլ Արցախի ներկայիս սահմանների միջազգային ճանաչումը:

Վերոնշյալ սկզբունքներից զատ բանակցային սեղանին պետք է դրվեն 1991թ. դեկտեմբերի 10-ին, ԼՂ-ի բնակչության հանրաքվեով ամրագրված անկախ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մաս կազմող, սակայն ռազմական գործողությունների արդյունքում Ադրբեջանի կողմից զավթված Շահումյանի (ամբողջությամբ), Մարտունու և Մարտակերտի շրջանների արևելյան հատվածների վերադարձի հիմնախնդիրը:

Ելնելով վերոգրյալից, աննդունելի ենք համարում ցանկացած այնպիսի գործընթաց, որի շրջանակներում կարող է քննարկվել Արցախի տարածքային ամբողջականությունը կազմող տարածքներից որևէ մեկի վերադարձը Արցախի անվտանգության միջազգային երաշխիքի և (կամ) միջազգային ճանաչման դիմաց: Վերոնշյալ մոտեցումները հիմնավորվում են պատմական այն ճշմարտությամբ, որ ինչպես Արցախի այնպես էլ ՀՀ պարագայում միշտ վերջիններս են եղել սեփական անվտանգության միակ երաշխավորները:

---

[1] S. Թորոսյան, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հնարավորություններն ու հեռանկարները http://lraber.asj-oa.am/549/1/2009-2__3_.pdf, էջ6

[2] Huntington P. Samuel, The clash of civilizations and the remaking of world order/ Simon Schuster, New York 1996, pages 252-297

[3] http://mfa.am/hy/artsakh-issue/

Սուրեն Պետրոսյան

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆՏՐԱՆՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Բանալի բառեր՝ *քաղաքական ընտրանի, ինքնորոշում, բանակցային գործընթաց, մարտահրավեր հակամարտության, կարգավորում*

Հարահուն փոփոխվող, գլոբալիզացվող և ցանցային հարաբերությունների տրամաբանության շրջանակներում զարգացող աշխարհաքաղաքական գործընթացներում կարևորագույն դերակատարում ունի քաղաքական ընտրանին, որը ինչպես անվտանգության այնպես էլ ռազմավարական ապագայի մոդելավորման երաշխավորն է: Այս համատեքստում Արցախի քաղաքական ընտրանուն դիտարկելով, որպես հակամարտության կարգավորման գլխավոր դերակատար բանակցային շրջանակներում, կարևորվում է վերջինիս կողմից հստակ սկզբունքների սահմանումը՝ պայմանավորված ազգային և պետական գերակա շահով: Վերոնշյալի գործնական արտահայտումը կլինի Արցախի ներկայիս սահմանների միջազգային ճանաչման հիմնադրութի սահմանումը, որպես բանակցային գործընթացի հիմնական սկզբունք:

Сурен Петросян

ПОЛИТИЧЕСКИЕ ЭЛИТНЫЕ ПРЕДСТАВИТЕЛИ АРЦАХСКОЙ РЕСПУБЛИКИ В ПРОЦЕССЕ ПЕРЕГОВОРОВ

Ключевые слова: *политическая элита, самоопределение, переговорный процесс, разрешение конфликтов, урегулирование*

В геополитических процессах, развивающихся в логике взаимозаменяющихся, глобализированных и сетевых отношений, политическая элита играет важную роль, который является гарантом безопасности и моделирования стратегического будущего. В этом контексте, рассматривая политическую элиту Арцаха как ключевого игрока в урегулировании конфликта, важно определить четкие принципы последних, обусловленные национальным и государственным превосходством. Практическое выражение вышесказанного станет основанием для международного признания нынешних границ Арцаха в качестве основного принципа переговорного процесса.

Suren Petrosyan

ARTSAKH'S POLITICAL ELITE REPRESENTATIVES IN NEGOTIATION PROCESS

Key words: *Political elite, self-determination, negotiation process, conflict resolution, settlement*

In the geopolitical processes developing within the logic of mutually-changing, globalized and networked relations, the political elite plays an important role, which is the guarantor of security and simulation of a strategic future. In this context, considering Artsakh's political elite as a key player in the conflict settlement, it is important to define clear principles of the latter, conditioned by national and state supremacy. the practical expression of the aforementioned will be the establishment of the foundation for the international recognition of the current borders of Artsakh as the main principle of the negotiation process.